ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵԾՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

TRANSPARENCY INTERNATIONAL
the global coalition against corruption

Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2016
Եվրոպա և Միջին Ասիա
Հաճախակի տրվող հարցեր

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում Թրանսփարենսի Ինթերնեշնլի Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի (ԹԻ) Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը կոռուպցիայի մասին կարծիքների և դրանում ներքաշվածության վերաբերյալ համաշխարհային մասշտաբի հանրային կարծիքի ամենաընդգրկուն հարցումն է: 2016 թ. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի արդյունքների՝ թվով իններորդ հրապարակումը սկզբնական փուլում լույս է տեսնում տարածաշրջանային զեկույցների տեսքով: Եվրոպա և Միջին Ասիա տարածաշրջանի սույն զեկույցի արդյունքները հիմնված են 42 երկրներում/տարածքներում հարցված 58,238 անձանց կարծիքների վրա: Աֆրիկա, Միջին Արևելք և Հյուսիսային Աֆրիկա տարածաշրջանների հրապարակումներն արդեն լույս են ընծայվել (տես http://www.transparency.org/whatwedo/publication/people_and_corruption_africa_survey_201 և http://www.transparency.org/whatwedo/publication/people_and_corruption_mena_survey_2016): Ամերիկաներ և Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանների մասին զեկույցները կհրապարակվեն 2017 թ.: Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի վերջնական համաշխարհային զեկույցը ևս կհրապարակվի 2017 թ.:

2. Ինչպիսի՞ հարցեր են ներառված հարցաթերթիկում:

Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրում ներառված են ընդհանուր հարցեր այն մասին, թե ինչպիսին է մարդկանց կողմից իրենց երկրներում առկա կոռուպցիայի ընկալումը, և որ հաստատություններում/ոլորտներում է կոռուպցիայի հիմնախնդիրն առավել լուրջ: Այն նաև չափում է, թե վերջին մեկ տարվա ընթացքում քաղաքացիները որքանով են առնչվել կոռուպցիային՝ հարցման մեջ ներառված ութ տարբեր ծառայություններ ստանալիս: Հարցումը պարզում է մարդկանց կարծիքը, թե կոռուպցիայի դեմ պայքարում իրենց կառավարությունների գործադրած ջանքերը որքանով են հաջողվել կամ ձախողվել:

2016թ. *Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը* ներառում է նաև մի քանի նոր հարցեր: Մի շարք ցուցանիշներ նպատակ ունեն պարզելու, թե արդյոք հարցվողները բարձրաձայնել են կոռուպցիոն դեպքերի մասին, և եթե բարձրաձայնել են, ինչ հետևանք է եղել: Ուսումնասիրվել են նաև, թե այդ երկրներում ինչն է խոչընդոտում կոռուպցիայի վերաբերյալ բարձրաձայնելուն: Մյուս մոդուլը մանրամասն քննության է առնում, թե որքանով են քաղաքացիները պատրաստ ներգրավվելու կոռուպցիայի դեմ պայքարում: ԹԻ-ն նաև առաջին անգամ հարցնում է, թե արդյոք չափազանց մեծ է հարուստների անհարկի ազդեցությունը իշխանությունների որոշումների վրա:

3. Ո՞վ և ե՞րբ է անցկացրել ներկա հարցումը:

2016 թ. *Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի* հարցումը Եվրոպա և Միջին Ասիա տարածաշրջանում ԹԻ անունից անցկացրել են հանրային կարծիք ուսումնասիրող երկու ընկերություններ: «ԹիԷնԷս Ըփինյըն» (TNS Opinion) ընկերությունը (2016թ. սեպտեմբերից որպես Քանթար Փաբլիք Բրյուսել) տեղեկություններ է հավաքել մոդուլի համար դեմ առ դեմ հարցազրույցների մեթոդով: «Էֆիշնս3» ընկերությունը (Efficience3) պատասխանատու է հեռախոսային հարցազրույցների համար:

«ԹիԷնԷս Ըփինյըն»-ը տվյալներ է հավաքել տնային տնտեսությունների շրջանում դեմ առ դեմ հարցազրույցներով համակարգչի օգնությամբ անհատական հարցումների միջոցով (CAPI): Նախատեսված յուրաքանչյուր երկրում կիրառվել է քլաստերային շերտավորված ընտրանք՝ պատահական հավանականությամբ: Ընտրանքը շերտավորվել է ըստ տարածաշրջանների և ուրբանիզացիայի մակարդակի: Տնային տնտեսություններն ընտրվել են պատահական ընտրանքով կա՛մ նախապես որոշված պատահական քայլքի մեթոդով կամ օգտվելով եղա հասցեների ցուցակներից: Հարցվողն ընտրվել է պատահական ընտրանքով՝ տնային տնտեսասության բոլոր մեծահասակների թվից:

«Էֆիշնս3»-ը հարցումն իրականացրել է համակարգչի օգնությամբ հեռախոսային հարցումների միջոցով (CATI): Տնային տնտեսություններն ընտրվել են զանգերի պատահական ընտրանքի մեթոդով, իսկ հարցվողներն ընտրվել են տվյալ տնային տնտեսության մեծահասակներից՝ պատահական ընտրանքով: Հարցազրույց վարելու համար ընտրվել են թե՛ ֆիքսված հեռախոսակապը և թե՛ բջջային հեռախոսները: Ընտրանքը շերտավորվել է ըստ երկրի բոլոր շրջանների՝ համաձայն բնակչության թվի:

Հարցաթերթիկի կառուցվածքը և բովանդակությունը ստուգվել է Կոռուպցիայի, հետազոտական մեթոդների, էկոնոմետրիկայի և վիճակագրության ոլորտների

առաջատար մասնագետներից կազմված ԹԻ-ի Համաթվերի խորհրդատվական կոմիտեի կողմից: Դաշտային աշխատանքը տևել է 2015 թ. նոյեմբերից մինչև 2016 թ. հուլիսը: Մեթոդաբանության ամբողջական նկարագրությունը ըստ երկրների կարող եք գտնել զեկույցի էջ 32-ում:

4. Ինչո՞ւ որոշակի երկրներ ներառված են/չեն հարցումում:

Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը նպատակ ունի ներառել հնարավորինս շատ երկրներ, որտեղ հնարավոր է անվտանգ կերպով անցկացնել հարցազրույցներ: Եվրոպայի և Միջին Ասիայի տարածաշրջանի համար *Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի* մոդուլը ներառվել է որպես «ԹիԷնԷս Ըփինյըն»-ի կողմից իրականացված ավելի երկար հարցման մաս: Այն ընդգրկում է Արևելյան Եվրոպայի և Միջին Ասիայի երկրները, նաև Գերմանիան և Իտալիան: ԹԻ-ն չի միջամտել «ԹիԷնԷս Ըփինյըն»-ի կողմից հարցումում երկրների ընդգրկման հարցում: ԹԻ-ն Արևմտյան Եվրոպայի երկրներում է հավելյալ հարցումներ անցկացրել՝ հարցման համար հատկացվող սահմանափակ ֆինանսավորումով: ԹԻ-ն նպատակ ունի ավելի շատ երկրներ ընդգրկել հարցման հաջորդ փուլում:

5. Ինչպե՞ս կարող են օգտագործվել հարցման արդյունքները:

Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը կոռուպցիայի վերաբերյալ հասարակության կարծիքների և նրանում քաղաքացիների ներքաշվածության վերաբերյալ էմպիրիկ տվյալների հարուստ աղբյուր է: Հանրային քաղաքականություն մշակողները կարող են օգտագործել Բարոմետրի տվյալները՝ ավելի լավ հասկանալու, թե ինչ չափով են տարբեր հաստատությունները և ծառայություններն ընկալվում որպես կոռումպացված և պարզելու, թե դրանցից որոնցում են առավել հաճախ տրվում կաշառքներ: Դա հնարավորություն է տալիս հակակոռուպցիոն քաղաքականության և ծրագրերի կիրառման միջոցով արդյունավետ կերպով թիրախավորելու տվյալ երկրում առավել լուրջ կոռուպցիոն ռիսկեր պարունակող հաստատություններն ու ծառայությունները: Քաղաքացիական հասարակության կառույցները և լրագրողները կարող են օգտագործել հարցումը որպես կոռուպցիայի վերաբերյալ իրենց երկրների քաղաքացիների կարծիքների արտացոլում: Բարոմետրի տվյալները կարող են օգտագործվել՝ բարձրացնելու համար մարդկանց առօրյա կյանքի վրա կոռուպցիայի ազդեցության վերաբերյալ իրազեկությունը: Այն կարող է նաև օգտագործվել

կոռուպցիայի դեմ պայքարում մարդկանց ներգրավելու նպատակով՝ վեր հանելով այդ պայքարին անձամբ մասնակից դառնալու նրանց ցանկությունը, օրինակ, կոռուպցիոն դեպքերի մասին բարձրաձայնելու միջոցով: Մասնավոր հատվածը կարող է օգտագործել Բարոմետրի արդյունքները՝ ավելի լավ հասկանալու համար իր երկրի քաղաքական իրավիճակը, ինչպես նաև, թե որքանով են ուժեղ նրա ազգային ու պետական կառույցները: Գիտահետազոտական ուսումնասիրություններ անցկացնողները կարող են օգտագործել Բարոմետրի տվյալները՝ ուսումնասիրելու կոռուպցիային և կաշառակերությանը նպաստող գործոնները և դրանց հետևանքները մեծ թվով երկրներում: Մի շարք կարևոր հարցեր ուսումնասիրելու համար Բարոմետրն առաջարկում է երկրների մեծ ընտրություն և ժամանակագրական առումով արժեքավոր տվյալներ: Այն, հետևաբար տվյալների հարուստ և եզակի աղբյուր է ակադեմիական հանրության համար:

6. Համեմատելի՞ են, արդյոք, Բարոմետրի տարբեր տարիների տվյալները:

Եթե տարբեր տարիներին Բարոմետրում ներառված հարցերը կրկնվում են, հնարավոր է կատարել ժամանակային ուղղակի համեմատություններ: Հարցման 2013 թ. հրապարակումից հետո հարցաթերթիկը վերանայվել է հետազոտողների կողմից, որի արդյունքում ԹԻ-ն մի շարք փոփոխություններ է կատարել: Հարցերը տարեցտարի փոփոխվում են՝ պարբերաբար ընդգրկվելով կամ դուրս մնալով հարցաթերթիկից: Հետևաբար, ժամանակային կտրվածքով համեմատելի են միայն այն հարցերի վերաբերյալ տվյալները, որոնք կրկնվել են տարբեր տարիների Բարոմետրի հարցումներում: Բարոմետրի նախորդ հարցումների տվյալները տե՛ս www.transparency.org/research/gcb/:

7. Ինչո՞ւ կաշառատվության վերաբերյալ հարցերը չեն տրվել բոլոր երկրներում:

Հարցման համար սահմանապակ ֆինանսավորման պատճառով կաշառատվության վերաբերյալ հարցերը չեն տրվել հետևյալ երկրներում՝ Բելգիա, Ֆրանսիա, Գրինլանդիա, Նիդերլանդներ, Շվեդիա, Շվեյցարիա և Մեծ Բրիտանիա: ԵՄ կաշառատվության միջին աստճանը և տվյալ երկրի կաշառատվության աստիճանը չափելիս ԹԻ-ն օգտագործել է 2014 թ. Եվրոբարոմետրի հարցման արդյունքները Բելգիայի, Ֆրանսիայի, Նիդերլանդների, Շվեդիայի և ՄԹ-ի համար որպես համեմատելի տվյալի աղբյուր (տես http://ec.europa.eu/public_opinion/archives/ebs/ebs_397_en.pdf):

Դժբախտաբար, համեմատելի տվյալների աղբյուր չի գտնվել Գրենլանդիայի և Շվեյցարիայի համար, ուստի այս երկու երկրները դուրս են մնացել կաշառատվության վերաբերյալ վերլուծությունից: Մյուս բոլոր երկրներում կաշառատվության ընդգրկուն մոդուլը կիրառվել է՝ պարզելու համար կաշառատվության ռիսկը8 հանրային ծառայություններում:

8. Ի՞նչ տարբերություններ կան Բարոմետրի և ԹԻ-ի Կոռուպցիայի ընկալման համաթվի միջև:

Բարոմետրը հանրային կարծիքի ուսումնասիրություն է, որը վեր է հանում քաղաքացիների տեսակետները կոռուպցիայի և իրենց կյանքի վրա դրա ազդեցության, ներառյալ նաև կաշառատվության մեջ նրանց ներքաշվածության, վերաբերյալ: Միևնույն ժամանակ, Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ), վեր է հանում փորձագետների կարծիքները:

ԿԸՀ-ն արտացոլում է հանրային ոլորտում և քաղաքականության մեջ առկա՝ կոռուպցիայի վերաբերյալ տեղեկացված դիտորդների կարծիքները: ԿԸՀ վերաբերյալ տեղեկատվության համար տե՛ս www.transparency.org/policy research/surveysindices/cpi: